

6383

Геодезична схема  
по рельєфу гор. Сілі

Оголювання та рельєф  
загальний № 4  
1887 - 1888 р-р

1924



R-31

Կ. Յ. ՊԱՌՄԱԶԵԱՆ

ԲԱԿԱՋԻՔ ԲԱԿԱՋԻՔ

ԹՂԹՈՒՅՑՈՒԹՔԻՆ

ՕՐՄԱՆԵՐԵ ԵՒ ՍԱՐԴԻՆԵՐԵ ՎԱՐԴԱՊԵՏԵՐԵՐՈՒ

ՀԵ

1887—1888 ԹԱԼԵՐԱԲ

39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՌԵՄՈՒ

ՓԱՐԻԶ

Տար. Յակոբ Բ. Պատրիարք

1924

9(47.925)  
F-31

6383

19 AUG 2011

9(47,925)

f-31

24 JAN 2008

## Կ. Յ. ԲԱՍԻՆԴԵԱՆ

# ԲԱՆԱԿԱՐԱՎՈՐԻ

## ԹՀԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Ըստ այս եկամուտների կարգադրությունը պահպանվում է առաջարկության մեջ:

268

1887—1888 ԹԱՒԵՐՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵՍՈՎ

phi u f b g

Տալր. Յակոբ Բ. Թիմրավիլի

1924



17 - MAR 2013

2005 HAL 45

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



32905-61

N 2028

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս պատճենը դու վեպության առջևում պահպանության  
գործությունների նկատմամբ պահպանության մեջ է գտնվում:  
Վեպության առջևում պահպանության մեջ գտնվում է այս պատճենը:

ՔԵՆՈՒՐ ՅԱՆ ԹՂԹ ԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՁԻՊԱՇԵԱՆԻ  
ՅԻՇԱՏԱԿԻՆ

Այս գրքոյկը քու յիշատակիդ նուիրելով՝ շատերու զարմանք պատճառեմ թերեւս, ո՛ եղիա, որ ցաւերուս ցաւակից էիր միշտ եւ ուրախութեանս' ուրախակից. վկա՞յ քու երեք հետեւեալ նամակներէ զոր յղած էիր ինձ ի միսիթարութիւն դարիք ժամերուս:

Նամակներուդ ընթերցումով յուսամ թէ փարատի այդպիսիներու զարմանքը:

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՁԻՊԱՇԵԱՆ  
ԱՌ.

Կ. Յ. ԲԱՍԻՆՁԵԱՆ

U.

Կ. Պոլիս, 6 Փետր. 1887

Սիրելին իմ Պասմածեան.

8ամկալի երկիրն հասար, փափաքիդ հասար. այլ սա-  
կայն ի՞նչ տաժանօք, ի՞նչ տառապանօք։ Մտաւանջովթեան  
մէջ եճ, եղբա՛լը, պատուական առողջովթեանդ հածար,  
աղօթքի չեմ հաւատար, այլ սրտէս աղօթել կու գայ քեզ  
հածար. Մարիկդ ալ որքա՛ս ևս առաւել կը հոգայ: Կը հան-  
դարտի սիրտս միայն, երբ լիշեմ թէ լաւ կը պահպանես  
անձդ: Եւ ծիթէ սրտիդ վրայ ճասունք ճ'ալ չունի՛ս, Ալիշա-  
նիդ նամակն: Գիտեմ որ զիս պինդ կը սիրեա՛ Ռուսինեանի  
բառով. սակայն կը պաշտես Ալիշանն. և կը նախանձիմ: Ես  
եթէ մեծ վանականին հանճարն ալ ունենայի, ըս պիտի կընայի  
սրտիդ մէջ գրաւել Սիսուանայ հեղինակին տեղն.  
Նա հայրենասիրութեանք օժտեալ է, և ես ճարբատեցու-  
թեանք, և դու՛ հայրենասիրութեանք: Նմանն ընդանն սիրէ:

Ես կը մեամ բացնու եւ սակայն, ո՛չ. կը հաւատամ որ զիս կը սիրես, և դու սիրոյս վրայ բնաւ չես տարակուսիր, որքան ալ լինիմ ճարդապեաց ու վայրենիս:

Սրտիս կը պակսիս, աղնի՛ւ Պասմաճեան: Քեզ անկասկած և աներկիւղ կը խօսէի վշտերուս վրայ. կը յուզուէիր, եւս առաւել ինձ կը համակրէիր: Ես այնքա՞ն ինձ համակրեցար որ, աղջկան մը քեզ նուիրած վարդն ինձ մատուցիր: Զը գիտեծ ի՛նչ եղաւ այդ վարդին վրայ դրած հնչակս. չը համեցայ տաղիս. այդ պատճառաւ անփոլթ եղայ: Օր մը թերեւս ձեռք անցնի ու հաւնիմ. տարօրինակ է ճարդս, կամ տարօրինակ եմ ես:

Կ'ուզէի նամակու հրատարակել Երկրագունսի մէջ. տեղ չը կար տարաբաղդաբար: Այդ հանդիսին վիճակն ալ ողբալի է. տէր չունի՛: Ն սրժումս այսուհետեւ ամեն ամսու վերջն հրատարակեմ պիտի՝ միւս հանդիսից նման:

Անցեալ օր Միսիթարեանց յայց ելայ: "Մեղբոս խանէն բարեւ ըսին քեզ համար Հայր Արիստակէս և հ. Յուսիի: Բարեւ նոյնակէս Միհրան Յովհաննէսիսանէն, որ գրասենեակ եկաւ անցեալ օր: Մօրս հետ և ես կ'ողջունեմ զքեզ՝

անձկաւ վերաբարձիդ սպասելով

#### Ե. ՏԵՂԻՔՃԻՊԱՇԵԱՆ

Բ.

Ե. Պոլս, 28 Հոկտ. 1887

Սիրելիդ իմ Պասմաճեան.

Ազնիւ ճարդիկու այսօր Գրասենեակս ընդունելու. պատիսն անիցայ, և լիշեցի այն քա՛ղցը օրերն ուր սայն Գրասենի

կին մէջ ճօտ առ ճօտ բաղմած կը մնչէինք քան կը խօսակցէինք: Մեր խօսքերուն նիւթն որքան ալ անտարբեր ըլլար, սիրտն իւր մասն ուներ. Գործի վրայ խօսէինք թէ Գրականութեան վրայ, երկրի վրայ թէ երկնի վրայ, սրտի ձայնը միշտ կը տիրէր: Այսպէս է ճշճարիտ բարեկամութեան մէջ, որպէս է մերն: Ես պէտք է խոստովանիմ թէ մեր այս հազուագիւտ բարեկամութեան հեղինակը մանաւանդ դրւն ես. Հրեշտակացն համեղութեամբ, աննման փափկութեամբ, անձնուիրութեամբ ինձ յաղթեցիր, ես որ ա՛լ փակած էի սիրտս ուեւ բարեկամութեան առջեւ. «բաւ են» կ'ըսէի «բարեկամք. նոր բարեկամութիւնք նոր կապեր են զիս աշխարհի զուելու. իսկ ես կը մտաբերեմ միւս կապերս ալ խզել, որպէս զի կարենամ նուիրել անձս լիովին անդրաշխարհեան կենաց զոր կը վարեմ այս աշխարհի վրայ:» Դուն, այս՝ քսղցր բարեկամ, յաղթեցիր սրտիս. և սիրտս ի՞նչպէս չը բացուէր ուր ուրեմն քու բարեկամութեանդ, երբ հետըզհետէ Ճանչցայ ի քեզ հասարակ մահկանացուներէ տարբեր ազնըւաց ազնիւ էակ ծը: Ներէ՛ ինձ, զի չեմ կարօղ ընդ քեզ յանձիս թղթակցիլ. բայց երբեք չեմ մտներ այս Գրասենեակս առանց աղու պատկերդ տեսնելու հոն. և միայն Գրասենեակս մտնելով զքեզ կը լիշեմ. ծաղկանց թագուհոյն տեսիլն ալ միթէ չը ներկայէր զքեզ իմ մտաց: Ես ի՛նչ որ փափուկ, աղնիւ, բանաստեղծական է, ի՛նչ որ շնորհ ունի, ի՛նչ որ շողն երկնացն լինքեան կրէ, միթէ չը լիշեցներ ինձ իմ Պասմաճեանն: — Ազնիւ ճայրիկու կ'աւետէ թէ պիտի վերադառնաս ի ճօտոյ, կը մաղթեմ ի բոլոր սրաւէ. սակայն ի՞նչպէս պիտի բաժնուիս սիրուհիէդ, Հայաստանէն: Գէթ զայն կարօտնալու, գէթ զայն եւս առաւել սիրելու համար, պար-

տիս գալ մայրաքաղաքս, ի Թերա, — ուր քաղցր մայրիկին  
հետ թերես կը ճնայ քեզ մեղուակն աղջիկ՝ որ աշնան մէջ  
վարդ կը ստեղծէ քեզ համար . . . :  
Կը կնքեմ երկոսողս, և խոստանալով գրել քեզ յատուկ,  
կողջագուրեմ սրտահատոր բարեկամս ի բոլոր սրտէ:

ԵՂԻԾ

Գ.

Կալաթա, 10 Օգոստ. 1888

Սիրեցեալլ իմ Պատմանեան.

Հասցէդ չը գիտեմ, և կը զգամ ահա թէ քեզ նման բարեկամի ծը հասցէին տղիտութիւնն նոյնքան ցաւալի — կամ գրէթէ նոյնքան ցաւալի է — որքան սիրանոշի ծը հասցէին տղիտութիւնն: Երկար ատենէ ի վեր չեմ գրած քեզ քեզ՝ պանդստիդ՝ որոյ այնքան հաճոյալի է սրտին՝ հեռաւոր ձայնն որ կը բղիփ սրտէ. այս՝ գիտեմ զայս, սակայն՝ ըսի՝ չը գիտեմ հասցէդ. կը սպասեմ մայրիկիդ. նա ևս չերեւիր այլ եւս: Մինչ այս, մինչ այն, անցեալ օր Ռէստի Տաճատեանէն նամակ ծը կը ստանամ. Պ. Տաճատեանի գիրն այնքա՞ն կը նմանի զրոյդ, մինչ զի կարծեցի թէ զքեզ կը կարդամ: Թերկրեցայ. զրպանս զրի թուղթն, և՝ զարմանալի բան՝ ստորագրութեան չը նայեցայ: Միայն թէ Պատմանեան էր այս անդամ միմիայն իմ վրաս խօսած և իւր վրայ. իւր առողջական վիճակին վրայ բառ մ'իսկ չէ գրած — կ'ըսէի իւրովի: — Տուն երբ գացի, նորէն բացի նամակն, այս անդամ ստորագրութեան ու թւականին նայեցայ: Պատմանեանէն չէ՝ թուղթն:

Այլ նոյն թուղթն աւետարեր մ'է եղեր: Յաջորդ անդամուն որ զրասենեակ կուգամ, այսօր, նստած իմ բարեկամ եւ ազգական Յովհաննէս Սեթեանին հետ կը խօսակցէի, և ահա ձայն մը՝ սրտալի՝ կը հարցնէ 27 թիւն: «Հոս է, հրամացեցէք:» Եւ աղնիւ մօրդ և իր պատուական պանդուխտ որդեկին առողջութեան վրայ բարելաւ տեղեկութիւններ ստանալով կը հրձուիմ: Եւ կը զրեմ, լցունելով ուր ուրեմն անձկագին փափազ: Երէկ ալ, սիրելիդ իմ Պատմանեան, մեծ ուրախութիւն մ'ունեցայ. պատճառն էր Մինսս Զերազ մտերիմս, ոյր խորհրդաւոր ուղեւորութիւնն այնքան այլազան տարածայնութեանց տեղի տուած էր. լուրջ անձինք, բարեկամ անձինք, կը փափազին թէ Տէրութեան կողմէն . . . Որքա՞ն տապնապեցայ, աւելորդ է ըսել. նոյնպէս աւելորդ է կամ անհնար է պատմել բերկրանքս, երբ երէկ Արեւելի մէջ կարդացի թէ ճաճբայ ելած է Զերազ Օրմանեանի հետ: Քեզ համար, սիրեցեալիդ իմ, այլորինակ տագնապներ չը պիտ' ունենամ. անտարակոյս շատ հայրենաւուր ես, իրավէս ու խորապէս հայրենաւուր ես. ուսկայն նոյն պարագայից մէջ չես գտնուած եւ հարկ ալ չը կայ որ գանուիս:

Հասպիւղէն հրաժարում վիշտ պատճառածէ բարեկամ սրտիդ: Եթէ ցաւ մ'ունիմ, այն ալ ինձ համար չէ, այլ Հասպիւղի մանուկ հայրենակցացս համար, ոյց դաստիարակութիւնն անիման կը թողուի «կը թեալ ու կը թաւէր» Թաղական Խորհրդոյ մը կողմանէ: Տարեգլուխէն ի վեր պահանջք ունիմ. այլ կ'ապրիմ ինչպէս որ է. միայն կը ցաւիմ, ի խորոց սրտից, այս՝ կը ցաւիմ Հասպիւղի մանկանց, Հայ մանկաւոյն համար համօրէն. քանզի համայնուրեք նոյն առասպելի նաեւհն ունին մեր վարժարանք: Դեռ աղղեցութիւնն մը չըրին Ուղեւոր ին (Մելքոն

Կիւրծեան), հրաշունչ դրութիւնք. Հասպիւղցիք տպառնալիք ըրած են թէւ, խլբած և ինքզինքնին ցցուցած են, այս՝ սակայն Թաղ. Խորհուրդն անշարժ կայ և մնայ, — և պիտի մնայ թերեւս յափտեան եւ այդ անձինք իմ բարեկածներս են. քանի՛ ծանր զգայուն սրախ՝ պախարակել զրս կը սիրէ, զրս կը սիրէ՛ր: Պիտի սիրեմ, պիտի յարգեմ միայն ծանկութեան անկեղծ բարեկածները, կրթութեան անշահմովը անձնուէր ախուեաններն:

Եսկ ի՞նչ կ'ընես դու, պատուական եղբայր և եղբայրակից: Ի՞նչ զամներ կը հաւաքես արգեօք այդ անսպառ. Դանձարանին մէջ, ուր բաղումք ոչինչ կը դոնեն՝ բայց միայն աւեր և ամայութիւն: Ի՞նչ յուզման մամեր՝ ըստ բացատրութեան մեր սիրելի բանաստեղծին՝ պահած են քեզ այդ հողն՝ որոյ խաւերն իրարմէ սուրբ, այդ շողն՝ որոյ յայտնած խորշերն իրարմէ խոր ու խորհրդաւոր ու փառաւոր են, յորս յուշախուզակ հրդիր կը լողայ ու կը խայտայ անծանօթ ցընծութեամբ, անձառ երանութեամբ:

Պօլիս իր Պատրիարքին ընտրութեամբ կը զբավի: Խորէնին (Լուսիննեան) համար մեծ հաւանականութիւն, իսկ Զամիչեանին համար զրէթէ ստուգութիւն կայ: Երեսփոխան ընտրուած եմ որպէս իմացար անշուշտ: Քուէարկութեան պահուն խաղ մը պիտի ընեմ. չը գիտեմ ի՞նչ տպաւորութիւն յառաջ պիտի բերէ: Քուէթուղթին վրայ պիտի գրեմ — նիրվանա՛ . . .

Քոյլ յաւէտ

Եղի՛ո

Աշաւասիկ Հ. Ղ. Ալիշանի այն նանակը՝ որուն կ'ակնարկէ Ե. Տէմիլիթիալաշեան.

Դ.

Վենետիկ, Ս. Ղազար, 3 յունիս, 1886

Ազնիւ. Պարոն,

Երկրորդ թըղթէդ իմացայ որ առաջին թուղթ ճ'այլ զլրեր են, զոր չեմ ընդունած, որով և ոչ իմացած միտքդ կամ խնդիրդ. այլ այսպիսի միայն՝ որ ջանան բանասիրական յօգուածովք լուսաւորել զմթապատ կէտս մեր աղգային պատճութեան: Այս ինձ իսկ շատ ցանկալի բան է, և փափազիմ որ կարենաս գտնել որ և է լուսատու նիւթեր կամ կայծեր. և համարիմ թէ ոչ սակաւ ազգայնոց թաքուցեալ մոխրանոցաց մէջ պահուին ազգալիսի կայծեր, և բարպաւոր համարելու է զնա՝ որ գտնէ ունելիք մի զանոնք ի դուրս կորգելու:

Լանկլուայի այլքան լաւ թօւրքարէն գրելլ՝ գրեթէ ինձ աւհաւատալի է. իրեն հետ շատ հեղ խօսեր եմ, այլ չէի գիտեր իր այլպէս թօւրքարէն զիտնալը. զրածն ինձ պիտանի կամ հետաքննելի բան մի չէ, այլ իրեն կը ընար պատիւ ընել և նշան յաջողակութեանն:

Փափագելավ յաջողութեան դիտմանոր և գործոցդ, մնած

իւ. Ճ.

Հ. Ղեհոն' Մ. Ալիշան

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Կարնոյ քաղաքին հիւսիսակին կողմը՝ դէպի ձոռիս երկարող թորթումայ գեղեցիկ հովիտները պտըտած ժամանակս՝ տեսնելով տեղւոյն անցեալ փառաց բաղմաթիւ յիշառակարանաց մնացորդներն, իսկոն յիշեյի Շաղագոմքի մէջ երանելոյն Մեսրովը հաստատած տուաջին դպրավանքն, և գիտնալով թէ տեղագիրք՝ Շատզոմք կամ Շաղագոմք անունը կուտան թորթումայ, փափագեցայ գոնել նոյն սրբավացն, եւ թանալ զայն արտասուօքս:

Այս փափագս առիթն ընծայեց հետագայ թուղթը զրկերու Վենետիկ:

b.

Թիւ 127

Շաղագոմք, Նիխաղ, Թ. Արեգ ՏՅՁԼ.

Վերապատուելի

Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան

Ի Վենետիկ.

Հայր Սուրբ,

Ի բաղմաց հետէ ճանօթ էիք ինձ „Բաղմավեպ”ի միջոցաւ, և այդ իմաստալից հանդիսարանին մէջ կարդալով հայ-

կական բանասիրական յօդուածներդ, իւրովի դատեր էի, թէ արժանաւոր օգնական և նեցուկ մը կընա՞ք լինել մեր սիրելի եւ հայրենանուեր Հօր Ղեւոնդայ Վ. Պ. Սլիշան, իւր ներկայ ալեղարդ հասակին մէջ: Ո՞չ, ստէալ կը մտածեմ նոյն պաշտելի Հօր առողջական վիճակին վրայ, ու իւր տեսութեան գործարանաց խանգարումն ցա՞ւ է եղած համայն ազգասիրաց . . . :

Պատուական Հայր, այն դատումս է որ կը ստիպէ զիս անգամ ալ զրել Զեր Վերապատութեան, ու թղթակցութեամբ չպաղեցնել մեր բաղմազբաղ և արդինաշատ Հայրն: — Արդէն ծանօթ է ն. Գերաշնորհութեան թէ կայսերական հրամանաւ Կարնոյ նահանգին առողջապահ պաշտօնեայ անուանուած եճ, ու տեղագրելու համար ալ երբեմն երբեմն կը շըջիմ զանազան գիւղեր. Բայց Ս. Մեսրոպայ Շաղագոմք անապատին մէջ հաստատած գպրոցը չեմ դտած ցարդ եթէ գիւղին անունը գիտէք՝ ինձ գրեցէք, որպէս զի հարկ եղած խուզարկութիւնն ու հետազոտութիւնն ընեմ:

Պոլիս եղած ժամանակս լսեր էի թէ Վեր. Հ. Գարեգին Զարպհանելեան վարդապետն Հին քարգ Խանութեանց վրայ եւս զիրք մը պիտի յօրինէ. եթէ նոյն երկասիրութեան մէջ միջին դարուց թարգմանչաց գործերն ալ պիտի յիշէ, Ամիր Տովլաթ բժշկին թարգմանած „Ուամկական արուեստ”ի գիրքը չմոռնայ, որուն վրայ գրած էի Երկրագունս ամսաթերթին մէջ: — Բայց աստի, Հայր Ալիշան Միսիթարայ Անեցւոյ համար Զին անուն գիրք մը թարգմանած է կ'ըսէ, Վարդանայ Պատմէի յիշառակած «Ուամկ» անունը փոխելով. („Ենորհայի եւ Պարագայ իւր”, 127.) ասոր համաձիտ չե՞մ դտնուիր, եւ Վարդանայ հետ կ'ըսեմ թէ «Թարգմանեաց Միսիթար պատ-

ուեալ քահանայն . . . 'ի սպարսկէ միոջէ Ո Ճիշ անուն':—  
Մխիթար ըսի, ու Հերացին ճիտքս ինկաւ.. ասոր ալ Զերմանց  
Մխիթարութիւն անուն գրոյ վրաչ սա հաւանական կարծիքն  
ոնիմ, թէ յետ դժնդակ մահուան Շնորհալոյ. իւր մեծ եղ-  
բօրօրդին. — Գրիգոր Տղայն — բազմելով յաթոռ Հայրապետու-  
թեան, վախցաւ նոյն Ճախնուատ տեղերը դանուած տենդէն, —  
որոյ անողոք Ճիրանաց զոհ էր եղած իւր ընտանին, — եւ  
այդ հիւանդութեան դարձանը գտնել ուզեց. այս պատճառաւ  
զինեց ժամանակին անուանի ու իւր ընտանիւաց սիրելի "առն  
բժշկապետի և աստեղապետի Մխիթարայ, որ զրեց յիշեալ  
զիրքը՝ "պատճառ ունելով . . . զսէր և զօժարութիւն սրբոյ  
և աստուածապատիս կաթուզիկոսին Հայոց Տն. Գրիգորի, որ  
մակակոչի Տղայ: (1)

Համբուրելով խոնարհաբար զսուրբ աջս Ակեր, Վեր. Հ.  
Ղեւոնդայ Մ. Ալիշան և Հ. Գարեգ. Զարպհանելեան, բազ-  
մահուատ վարդապետաց, և ի մասնաւորի Զեր Վերապատուու-  
թեան,

Մնամ

Խ. Տ.

Վշտակիր Կ. Յ. ՊԱՍՄԱՋԵԱՆ

(1) Մխիթար Հերացի իր «Զերմանց Մխիթարու-  
թիւն» գործին յառաջաբանին մէջ այս բառերով կը  
յայտնէ իր աշխատասիրութեան թուականն ու զրդա-  
պատճառ եղող անձն, որոնք իրարու հետ կը համա-  
ձայնին ժամանակագրապէս. — «Թարգմանեցաւ, և  
զրեցաւ զիրքս այս յամի հազարերորդի հարիւրերոր-  
դի ութսուներորդի չորրորդի Տն. մերոյ ՅԱ. ԲԱ. Պա-

— 17 —  
22805 - 4  
Սոյն նամակիս թուականէն երկու ամիս յետոյ պատաս-  
համն ստացայ, որ է.  
Այսօդ Անիս և Ռոտումնատենչ Պարոն

Զեր 127 թուով ի նաղադուայ զրած նամակն ընդունե-  
ցայ, որ և ինձ մեծ հաճութիւն պատճառեց: Երանի կուտած  
ձեր աչաց որ այս մեծ բաղդն ունեցան մեր Հայրենեաց քաղցր  
նշանակութեան համարաց հետագաւութեամբը զուարձանալ:  
նատգոնի (որ և նաղուծք կամ ըստ այսոց նատգոնք) Մես-  
րումբեան գարոցի տեղի իսկ որոշելը՝ թալ թէ զանելը շատ  
դժուար է. վասն զի ե. գարու ճատենագիրք նորա անունը ձի-  
այն մեզ աւանդած են ընդհանուր և ալօտ նշանակութեամբ:  
Սակայն յայսպիսի դէպս ես միշտ ախորժած եմ իմաստուն  
Մենասրի Հայոց Խորհնացի ունել առաջնորդ: Իս Հայոց Պատմ.  
Գ. զլ. Կ. էջ 518, կ'աւանդէ. «Մեսրավայ կացեալ յսնսպա-  
տին, և ի հովանաւոր տեղին, որ նաղումին անուանին»:  
Անապատ՝ ինչպէս ի բազում տեղիս՝ այսպէս և աստ մենսո-  
ւանն հասկանալու է, ըստ իս, ուր հաստատեց իւր դպրոցն  
և վարդապետեց: Իսկ եթէ կը Հարցանէք յորափառումն վայրի  
էր, և այժմ պէտք է որոնել զայն. կ'ըսեմ, ուր որ կը զըո-  
նուին վտակք ջուրց և ջրվէժք հովասուն և պաղաւէտ ծա-  
ռաստանօք հանդերձ. և այս պէտք է որ լինի, ըստ իմ

լստեանն (184). յորում էր եւ թուականս Հայոց ՈԼԳ.  
«ի հայրապետութեան սրբազն կաթուզիկոսիս Հայոց  
Տն. Գրիգորի որդւոյ Վասլի բարեպաշտ իշխանի Պահ-  
լաւունուոյ, որ եւ պատճառն է գրոցն:»



կարծեաց՝ այժմեան թորբում զիւղաքաղաքը կամ նորա շըր-  
ջակայքը, որուն հնագոյն անունն էր Շաղագում. որ բայց ի  
գաւառէն՝ նորա համանուն աւան մի էր. Բայց ընդ վայրե-  
նացեալ ճացառօք ճաճկուած աւերակներն ի զուր որոնելէն  
առաջ պէտք էք բնիկ ճերոց կենդանի աւանդութիւններուն  
մէջ քննել: — Սակայն աստի աւելի հեշտ է և կարեւոր մի  
եւ նոյն գաւառին մէջ Վարայրվարոյ ամրոցին հետազոտու-  
թիւնն, յորում գերի անկան ի ձեռս Պարսից կանայք երկոց  
կամսարականաց ներսէցի և Հրահատայ, ըստ Գ. Փարակց-  
ոյ Պատմ. Հ. 444: Յուսած թէ ասոնց հետ ի միասին կը  
հաճիք հաղորդել նաև ուրիշ տեղեկութիւններ: — Հ. Կեւոնդ  
Մ. Ալիշանի մէկ աչքի տկարութիւնը նորա ուսուժնասլու-  
թիւնն ընաւ խափանած չէ և յուսածք թէ չպիտի խափանէ.  
նա պարթևական քաջառողջութեամբ մեղմէ աւելի ժիր է եւ  
չունառաց անհաւատալի անխոնջութեամբ կը վաստակի գիշեր  
ցորեկ: Ուստի Գուք փիսանակ մտասանջութեամբ գշտակցե-  
լու, փափաքելի էր որ նորա և մեր ուրախութիւնը կրկնա-  
պատկէիք՝ մեռադիր մի զրկելով, որուն լիւլի արժմանա-  
ւորութիւն և իրաւունք ունի, վասն զի մեր հայրենեաց մե-  
ռած իշշատակները կենդանացոց և այժմ աւերակներ եւս կը  
կանգնէ:

Վարդանայ լիշած պարսկական անունն մենք, Ալիշա-  
նին իսկ քաջաճանօթ էր (Ենորհ. և Պար. 127): Բայց թէ  
այս անունն արդեօք հեղինակի՞ն կը վերաբերի, ինչպէս  
Վարդան կամ նորա զրչագիրք զրած են, թէ ընդհակառակն  
զրուածին, ինչպէս Բրոսաէ և Ալիշան հասկանալ ուզու  
են: Արդ եթէ, զրուածքին վերաբերելու լինիք, ես իսկ հա-  
ւանական կը համարեմ թէ Զի՞ն եղած լինի, որ ի պարտիկ

լեզու առաջաբաշխական զրուած կը նշանակէ, և Մխիթա-  
րայ թարգմանածին լաւ կը պատշաճի: — Առ Հ. Գարեգին  
Զարպահառեան ըրած Զեր յանձնարարութիւնն և ողջոյնը հա-  
զրգեցի, նա արդէն կարգացեր էր Զեր յօդնւածն Բահր  
Տոմիաթիւ երկասիրութեան մասին, և փոխազարձ իւր ու-  
ջոյն կը ճատուցանէ. այսպէս և Հ. Գեւոնդ Ալիշանը:  
Մաղթելով Զեր քաջողջութիւն ի սրտէ, Ճնամ

լո. Ճ.

Հ. ՅԱՐԱՆԴ. Վ. ՄԱՐԳԻՍԵՂԻ  
Կր. Մխիթարեան

Վեհանիկ, ի Ա. Պաղար, 11 Մայիս 1887

լ:

Ի՞՞ Մարերի ՏՅԱՀ թուակիր տոմսով մը Հ.  
Բարսեղին իմաց տուի, թէ յետ քննութեան պիտի  
սպատասիսանեմ իրեն: Իսկ չայր Ալիշանին գրեցի հե-  
տեւեալ նամակը.

Բարձրահանձար ու Հայրենանուէր  
Հ. Գեւոնդ Վ. Ալիշան

Ի Վ. Ենետիկ.

Սուրբ Հայր,

Ասրդիւնան Հ. Բարսեղ Վարդապետի միջոցաւ ուղած  
բարդւնիդ ընդունեցաց շնորհակալութեամբ: Ուրախ եղայ լոե-  
լով թէ պարթևական քաջառողջութեամբ մեղմէ աւելի  
ժիր» էք: Ո՞չ, ո՞րքան ճատասանջութեան մէջ էի, ո՞րքան  
կը ճառածէի Գերազատուութեանդ առողջական վիճակին վը-



րայ: Ամէն անգամ որ Վենետիկէն նոր եկող մը տեսնէի, առաջին խօսքս ու հարցումս Ձեր վրայօք կը լինէին: Եւայժմ կը հանդարտեցնէ սիրոս Հ. Բարսեղ. Փա՛ռ.ք Աստուծոյ:

Պաշտելի Հայր, առ Ձեզ ունեցած սէրս չեմ կրնար փըցուն զբչովս յայտնել. այլ կը թողում որ խօսի Պոլսոյ երևելի գրագէտներէն մին, Տ. Եղիա Տէմիրճիլաշեան (Գրասէր Ասոն), որ հոս անցուցած հիւանդութեանս վրայօք զբելէն զինի՝ յաւելու. Նը հանդարտի սիրոս միայն, երբ յիշեմ թէ լուս կը պահպանես անձր: Եւ միթէ սրտիդ հվայ ճասունք մ'ալ չունիս, Ալիշանիդ նամակն: Գիտեմ որ զիս ափնդ կը սիրես՝ Ռուսինեանի բառով. սակայն կը պաշտես Ալիշանն. և կը նախանձիմ: Ես եթէ մեծ վանականին հանձարն ալ ունենայի, չը պիտի կրնայի սրտիդ մէջ գրաւել Սիսուանայ Հեղինակին տեղն. նա հայրենասիրութեամբ օժաւել է, և ես մարդաբարեցաւթեամբ, և դու՝ հայրենասիրութեամբ: Նմանն ըդնանն սիրէ: Ես կը մնամ բացն: Ահա նոյն տողերով կապացուցանեմ սիրոյս անշափութիւնն:

— Վարդանայ յիշած պարսկական անունն Ոնիէ, Հեղինակին կը վերաբերի կարծեմ, և ո՛չ գրուածքին. որովհետեւ Զին ի պարսիկ յեղու „աստղաբաշխական զրուած” չի նշանակեր, այլ աստեղահմայական գրուած. և այդ հմայական արուեստն առաւել ի կիր արկանէին Քաղղէացիք ու Պարսիկք. ուստի և պէտք չունէին թարգմանել „ի յոնաց ՚ի պարսս, և թէ Յոյնք ՚ի յետլքայ մարգարէութինէն ունէին”: Երդ Միսիթարայ Ոճիէ անուն պարսկէն թարգմանածն էր ԱԶպատճառք խաւարման արեգական և լուսնի. Հետևաբար Աստղաբաշխութիւն էր նա, և ո՛չ Աստղահմայութիւն (Զին): — Աւելի վճռական պատասխան ճը տանլու հա-

ճար՝ Վարդանայ Պատմութեան գրոց այլ և այլ ձեռագրաց զիմելու է. զի զիւել պարս է, թէ արգեօք Միսիթարայ յիշեալ աշխատութեան մասին մի և նո՞յն խօսքերը կը գործածէ բոլոր օրինակաց մէջ ալ: Այդ զիւրութենէ զուրկ եմ ես, տարաբաղդաբար:

— Ասցեալ օր Խախու գնացի. ուր տեսայ տասնէն ամի փոքր եկեղեցեաց մէջ Դաւթի կիւրապաղատի շինած փառաւոր Մայր Եկեղեցին, իբրեւ թագակիր իշխան՝ իւր ժողովրդեան զլուխը բազմած, սաղարթախտ ծառոց հովանեաց տակ: Սակայն Հակառակ իւր կրած վրացի արձանագրութեան, որ Դաւթի կլնծայէ նորա շինութիւնն, տեղացիք կաւանդին, թէ Արքայադրուտոր մը հաստատած է զայն: Այս կենդանի աւանդութիւնն հաւանական չի թուիր ինձ, և ստիպել կուտայ չհաւատալ նաև ուրիշ աւանդութեանց: Այս մասին Դերաշնորհութեանդ կարծիքն ի՞նչ է. բարեհաձեցէք Հաղորդել նուսասիս: Նոյնապէս և փափազիմ աւելիկանալ՝ թէ այդ սուրբ շէնքին մէկ սեանը վրայ տեսնուած հայ զբելն, որպէս յիշեք նշանաւաց մէջ, ստուգուած են: Ես չեմ տեսած, և անոր Համար՝ անզամ մ'եւս պիտի երթամ: Երիցս ողբացեալ Հ. Ներսէս Վ. Սարգիսեան ի՞նչպէս գրած է արգեօք յիւրամ Տեղագրութեան: Արգեօք բլրի մը վրայ զտուած կիսաւեր մատրան քարերէն միոյն հայական արձանագրոց համար է:

Ի համբոյք մատչելով սուրբ ձեռացդ, ինչպէս նաև Վեր. Հ. Գարեգին Վ. Զարպհանելեանի մեռաց, մնամ իս. ծ.

Զեր

Վշտակիր Կ. Յ. ՊԱՍՄԱԶԵԱՆ

Ճաղագոն, ԽԴ Մարերի ՏԵԶԸ.

լ.

Թուականէս շաբաթ ճը վերջ յայց ելոյ գիւղերն, եւ  
վերադարձիս՝ հետևեալ նամակն յղեցի առ Մաղաքիա Արքեալ.  
Օրմանեան, Առաջնորդ Կարնոյ:

Արհիապատիւ Սրբազն.

Երեկ զեռ նոր վերաբարձայ վեշտատանօրեայ շրջազա-  
յութենէ ճը. և իմացայ Սրբաղնութեանդ ալ վերադարձն: Այս  
ուղեւորութեանս միջոցին Վերինդեղ հանդիակելով վեշերեցի  
Ղազար աղային տոննը, ուր կարմրախայտ ձկան տապակ  
Հրամցուցին ինձ, ըսելով. «Պոլսեցիք ճուկը շատ սիրեն կը.  
կե՛ր, էֆէնտի՛ջան, կե՛ր. Սրբազնն ալ կերաւ աս ձկին, ու  
Պոլիսը միտքը բերաւ . . .»: Այն զիշեր սենեակ ճը ցուցին  
ինձ զիշերելու, յորում զիշերած էիք և Դուք. անկաղըն ճը  
պատրաստեցին ինձ ննջելու, յորում ննջած էիք և Դուք:  
Աչքս խփելով քոն եղայ, ու երազ տեսնելով արթնցայ. —  
Աշ, Սրբաղնութեանդ հետ Պոլիս կը գտնուէլինք, ի Պէօ-  
յլուք-ատէրէ, Աղեքսանդր Գ. Փանոսեանի տումն, հովասուն  
ու զովասուն տեղ ճը, բաղմաթոյը ու գեղեցկաբոյը ծաղ-  
կանց քով, ջրի ճը քով, ուր կը նուազեր սոխակն իւր  
քաղցը ու յափշտակիչ ձայնով, իսկ ճեր բանաստեղծ բա-  
րեկածն Փանոսեան՝ ձեռքը թղթիկ ճը բռնած՝ կընթեռնոյը  
պանդիսութեան վրայ գրած ճէկ Ռոբն եւ յանկարծ դու-  
ռը բաղիւցին. արթնցայ. արշալոյս էր: Եկեղեցի գնացի. ա-  
ղօթեցի. հոն գտնուած ձեռազիր Մաշտոցին և Աստուածած-  
նայ պատկերին յիշատակարանները գաղափարեցի. և ապա  
եղնոսու բերդին վրայ ելնելով քարի ճը վրայի կիսամաշ

արձանագրութիւնն օրինակեցի: Նոյն պահուն՝ լսին Սրբազ-  
նութեանդ փափազն ալ այդ արձանագրութեան մասին, բայց  
մոռացութեամբ զուրկ մնալիք յայտնեցին. ուստի՝ հարկ ե-  
ղաւ աւելի ուշադրութեամբ զննել այդ հնագարեան յիշա-  
տակարանը:

Սրբազն Տէ՛ր, Շաղագոմայ բաւական տեղերը պտըտե-  
ցաք, բայց արդեօք Մեսրոբեան զպրոցին աւելլ զտա՞ք,  
կամ Վարացրվարոյ աճրոցն, ուր գերի անկան ի ձեռս  
Պարսից կանաչք երկուց Կամարականաց ներսեցի և Հրա-  
հատայ: Այս մասին շատ կաշխատիմ, կը քննեմ, կը զին-  
նեմ, կը խուզարկեմ ամէն տեղ. սակայն ոչինչ արդիւնք կու-  
նենամ: Գիտեմ, Սրբազն, զիտեմ թէ նորէն՝ ռնատ անխո-  
շեմ է», պիտի ըսէք այժմ ինձ համար, ինչպէս որիշ ան-  
գամներ ալ ըսեր էք այլոց. բայց միթէ աւեղազելն ար-  
գելեա՞լ է. եթէ արգելեալ է, ինչո՞ւ Սրուանձաեանցի, Միրա-  
խորեանի, Ալահիլէրտեանի, և այլոց Տեղագրութիւնքն իը  
տպուին ու կը հրատարակուին:

Համբուրելով Սրբութեանդ ձեռքն . . .

Զեր

իւ. ձ.

Գշտակիր Կ. Յ. ՊԵՂՄԱՃԵՑԵՑ

Շաղագոմ, 3 Տօնիար 1887.

Թ.

Մի քանի օր յետոյ՝ այսպէս պատասխանեց ինձ Օր-  
մանեան։

Կարմին, 10 Յուլիս 1887.

Սիրելի Կարապետ։

Այս վայրկեանին ստացայ նամակդ, յորում կը պատմես  
երազդ թէ ի Պոլիս կը գտնուելինք ճիշտեղ. երազ չէ իրա-  
կանութիւն է, զի այս վայրկեանին իսկ պատրաստութիւններս  
աւարտեցան և հս կը ճենիմ ի Կ. Պոլիս։

Սակայն ի Կ. Պոլիս թողլով զառաջնորդութիւն որ ըստ  
Հրամանի Վեհափառ Մակար Կաթողիկոսի լինիմ ուսուցիչ  
Աստուածաբանութեան ի Ս. Էջմիածին։

Սպերէ զառնալուս, եկած էր Հրամանի կոնդակը. ճար  
չկայր ազատել, ուրեմն լաւագոյն էր փութալ կատարնել, եւ  
այսօր կը գործադրեմ: Պոլիսն ալ ինձմէ աւելցուցի, որ կա-  
րող լինիմ Պոլսեցիութիւնս նորոգել, զեռ չծելինած ի Կովկաս։

Ի՞նչ կըսես, այդ փոփոխութեամբ ուսումնասիրութեանց  
ճարդ պիտի զառնած, և այսուհետեւ աւելի զրող կը լինիմ։

Տեղեկազրութեանցդ Հակառակ չեմ, սակայն ամեն գոր-  
ծին պարագայներն խոշեմութեան առարկայ և ոչ թէ իրն  
ըստ ինքեան։

Ողջ լեռ. նամակդ Փանոսեանին կը տանիմ, և զիս յիշէ  
ուր եւ լինիմ։

ՄԱԴ. Եպ. ՕՐՄԱՆԵԱՆ

Ժ.

Այս նամակին պատասխանը դրկեցի Պոլիս, Հետևեալ  
տողերով։

Թիւ 163.

Պերճաշնորհ Տէր.

Երազիս իրականութիւնն յուղեց զիս, և ճողցուած յիշա-  
տակներ զարթոց մտացս մէջ: Պոլիս ճիշտեղ կը գտնուէինք.  
սակայն զիս թողլով ճեկնեցաք առանձինն, և նախանձեցայ,  
և արտասուեցի Վարդավառի օրով, և թրջեցի վարդանձան  
նամակն Սրբազնիդ . . . ի յիշատակ Զրհեղեղի։

Կարնեցիք ալ շատ ցաւեցան այդ փոփոխութեան, և  
հանրագրութիւնն մը կը պատրաստեն, կրկի՞ն զՁեզ ինդրելու:  
Սակայն, ըստ իս, Ս. Էջմիածնայ մէջ աւելի՛ կրնաք ծառա-  
յել ազգին, քան թէ յԱռաջնորդութեան: Ես ընդհանուր ազ-  
գին օգուտը կը մտածեմ: Կարնեցիք թող ընտրեն Խրիմեան  
Հայրիկը կամ Սրուանձտեանց եալիկուպար: Իսկ ազգը պատ-  
րաստ ունենայ ապագայ Կարօնիկոսացու մը, որ արդէն  
եղած էր Պոլսեցւոց ապագայ Պատրիարքուն: Եւ ես  
այժմէն կը փութամ շնորհաւորել ներկայ պաշտօնիդ Հետ  
ապագայինն ալ: Գուցէ ծիծաղիք այս խօսքիս, Սրբազն։  
բայց ես յոյս մեծ ունիմ թէ երազիս նման պիտի իրականա-  
նայ գուշակութիւնս ալ:

Մելիքեան եւ Ազաթեան կը պատմեն թէ գտեր էք  
Մեսրոպեան դպրոցն. ստո՞յդ է արդեօք, և ո՞ր: Ես այժմեան  
Թորթումն երկուքի բաժնած եմ, յնուով Խորենացւոյ և Փար-  
պեցւոյ, այսպէս. — Թորթումայ գետոյն Կողուանցայ Ճիւղէն

մինչև Աղբիձոր, աջ կողմն անուանած եմ Շաղագոմ. իսկ ձախ կողմն, մինչեւ Պարխար լեռներն, Տայոց աշխարհ: Արդ, ըստ այս բաժանման, Մեսրոպեան դպրոցն կը վնասեմ ես ի Շաղագոմ, որ է Թորթում-գալէ. այս կարծիքն կը յայտնէ նաև Ա. Ղազարու վանքէն Հ. Բարսեղ Սարգիսեան, իւր առ իս նաճակաւ: Այսպէս նաև Վարայրվարն ալ է, կըսէմ, Կողուանցայ անտառին մէջ գտնուած բերդն, յորում 500էն աւելի անձինք կրնան ապաստանիլ:

Սրբազն, Սպերէ գառնալով Պոլիս գնացիք. թերես ես ալ այդ բաղդին արժանանամ, զի Կիսկիճի վրայ Սպերն ալ աւելցուցմ մեզ:

Սպասելով Արշի Սրբազնութեանդ օրհնութիւնաբեր զւրութեան՝ ճնամ  
իւ. Ճ.

Վշտակիր Կ. Յ. ՊԱՍՄԱՉԵԱՆ

Շաղագոմ, Նիսաղ, 22 Տօթար 1887.

ԺԱ.

Տակաւին այս նամակիս պատասխանը չստացած,  
եւ թուականէս քսան օր յետոյ, հետեւեալ թուղթը կը զրկեմ առ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, ի Վհնեաթիկ:

Պատուական եւ Մուրբ Հայր.

Աւամիկ՝ ըստ խոստմանս (ի ԻԴ. Մարերի 884թ) կը պատասխանեմ Ձեր անուշացոտ նամակին, յետ խորին զլնութեան ու քննութեան: Սակայն մի և նոյն թուականամեր սիրեցեալ Հ. Ալիշանի զրկած նամակիս պատասխանը ցարդ չեմ ստացած, որոյ համար մեծ ցաւ կղզած: Այդ նա

մակիս մէջ՝ Մխիթարյայ գրածը Զին չըլլալն, և Վարդանայ յիշած անունը Հեղմակին վերաբերին ապացուցած էի. այն պատճառաւ՝ հոս ալ կրկնելն աւելորդ սեպեցի:

Մեսրոպեան դպրոցն ու Վարայրվարը զանելու համար՝ նախ պէտք է բոն Շաղագոմքն որոնել. զի Թորթում անունը Շաղագումէն փոխուած ըլլալոն հաւանական փատերը կը պակսին. նոյնպէս և այժմեան Թորթում ըսուած գաւառը մեր հին Շատագոմքը լինելուն: Այս և ասոր նման դէպերու մէջ ես ալ միշտ կախորժիմ Խորենացիէն, որ կը զրէ յիւրում Աշխարհազրութեան. «Ճայք առ երի կայ Գուգարաց, ամրոցօք եւ բերդօք կառուցեալ, և ունի գաւառս ինն. զիող զԲերլացփոր, զՊարտիզացփոր, զՃակս, զԲուխա, զՌիալէ, զԱզոր, զԿափոր, զԱսեացփոր»: Ամրոցք և բերդք բազմաթիւ են ի Թորթում: Իսկ Բերդացփոր՝ (որ անշուշտ Արցախու Բերդաւըր չէ,) Բեսատոր աղուակեալ անուամբ կը գտնուի մի և նոյն գաւառին մէջ, Օլթի գնալիք ճանապարհին վրայ, և Թորթում զիւղաքաղաքին հիւսիսային արեւմտակողն, ութ ժամ հեռաւորութեամբ: Բուխա՝ դարձեալ մի և նոյն գաւառին մէջ և յիշեալ զիւղաքաղաքին արևելյահիսսակողնը կը գտնուի, հիմք ժամ հեռաւորութեամբ: զիւղը բերդի մը տակ լինելուն՝ Պուղա-զալի կը կոչուի: Ոքաղէ՝ թէպէտ ուրիշ հին անուանց հետ հայրենի աւերակաց տակ թաղուած թողուած ճնացած է, սակայն ըստուգիսոն Փարպեցի կը ցուցնէ մեզ նոյն գաւառին մէկ մասն այսպէս. «Եւ երթեալ (Հազարաւուխոյ) յՌիալն՝ բանակէր ճօս՝ ի զեօղն, որում անունն էր միումն Գեւլիկ եւ միւսումն Վարդաւէն»: (Պատմ. 443.) որք իրարձէ 1½ ժամ հեռաւորութեամբ զիւղեր են, մի և նոյն անուններով: Իսկ

Ազորդ՝ իւր անունն անարատ պահած է ցարդ, և կը դըմ-նուի Թորթումայ Հիւսիսակողմն, եօթը ժամ Հեռաւորութեամբ:

Արդ՝ քանի որ յիշեալ գտառներն Թորթումայ մէջ կը գտնուին և համանուն գիւղաքաղաքն կը պատեն. քանի որ Ոքաղէ գաւառն Թորթում գիւղաքաղաքէն հազիւ երկու ժամ Հեռաւորութիւն ունի. ըստ իս, այսուհետեւ անկարելի պիտի լինի Շաղագոմ կոչել Թորթումն, այլ յաւետ պիտի կոչեմ Ասխարհ Տայոց:

Եթէ կարենանք գիտնալ թէ այն ժամանակները մինչեւ ո՞ւր տիրած էին Յոհնք (Հոռոմք), զործը քիչ մը կը դիւրանայ. և այն ալ պէտք է վնտուել բիւղանդական պատճազրոց, ինչպէս Պրոկոպիոսի և այլոց մէջ, զորս ձեռք չեմ անցուցած դժբաղաբար: Եցդ պատճագիրներէն Յունական բաժինն ստուգելնէս յետոյ՝ կարող ենք գտնել յիշեալ երկու անձնկալի Հնութիւնքն. վասն զի Խորենացին Պոտ. Հայոց, Գ. գլ. ՄԴ. կաւանդէ. “Էնդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, . . . և դպրոց կարգեաց յամենայն դաւառս, և ուսոյց զբնաւ կողմանս բաժնոյն Պարսից՝ Բայց ‘ի Յունաց մասէն’, և մի քանի գլուխ յետոյ (Կ.) կը յառելու. «Մեսրոպայ կացեալ յանապատ և ‘ի Հովհանաւոր աւոլիսն, որ Շ սղգոմէն անուանին»: Խորենացւոյ այս տողերէն կը հետեւի թէ Շաղագոմք Պարսից ձեռաց տակն էր այն ատեն. սակայն Փարացին ալ հետագայ տողերով Յունաց կուտայ Շաղագոմայ մէկ մասն, շարունակելով վերոյիշեալ պատճութիւնն (Անդ, էջ 443—444).” Եւ բանակեալ անդ զօրն զայն, լսէր ‘ի վաղին թէ Մամիկոնեանն Վահան մօտ է ’ի նա ՚ի Վարացրաբոյն ‘ի Հոռոմ տան, ‘ի գաւառին՝ ու կոչի Շաղագոմ»: «Հոռոմ տուն» անշուշտ Յունաց բաժինն

ըսել է, ինչպէս կը տեսնենք ծանօթութեան մէջ. իսկ Պարայիւղար հայերէն բառ է կարծեմ, որպէս Աւարայր:

Անշուշտ ծանօթ է Վերապատուութեանդ՝ չոս գտնուած էօշքայ նախշուն եկեղեցին. որոյ քով կը տեսնուին բազմաթիւ սենեակք ու բակեր: Ասոնց համար կըսէ Մելքիսեդեկեան Գերապայծառն՝ թէ Մեսրոպան զպրոցին աւերակեներն են: Յայց աւանդութիւն մը չկայ այս մասին, ու վերոյիշեալ բաժանմամբ ալ՝ էօշքը Տայոց սիրուլ կը կազմէ:— Այս կողմերը պարսկեցաւ նաև Օրմանեան Սրբազնն, որ աւելի հմուտ գոլով քոն զիս՝ թերևս մէկ նշոյն գտած ըլլայ. անոր համար մասնաւոր նամակաւ, մը ինդրած եմ իրմէ:

Հ. Ալիշանիս, Հ. Զարպհանելեանին և Զեր ձեռքերն համբուրելով և սպասելով մաղթանացր:

Մնամ

իւ. ծ.

Աշտակիր Կ. Ց. ՊԱՍՄԱԶԵԱՆ  
Տայք. և Նաւասարդ ՏՅՀԹ.

Ց. Գ.— Այս առթիւ ընդունեցէք Ամանորոյ (Նաւասարդ) շնորհաւորութիւններս:

ՆԱՅԵ

Ժ.Բ.

Ասոք վրայ երկու շաբաթ անցաւ, և ստացայ Պոլիսէն՝ Օրմանեան Սրբազնին զրած նամակիս պատասխանն, այս ձեւով.

Թիւ 166. Կառավարության պահանջման դի սպասի. Հ Պոլիս, 11 Օգոստ, 1887,  
Սիրելի Պատմաճեան.  
Նիխախէ ի Բիւզանդիան գրած նամակը, այսօր ընթա-  
Մաքրու ընդունեցայ սիրով, և միտիթաբեցի բարեսէր Տիկինը  
քոյն լուրերով:  
Ինչո՞ւ կուզա զի ես ի Բիւզանդիան կուզամ, ճիթէ՛ չե՞ն  
արժեր զեփիւռք հայրենեաց զհողունս Վասիրունի:  
Ուրախ եծ զի լաւ կը զնաշատես նոր պաշտօնս, այ  
կը սիսակս կաթողիկոսութեան սամալուխ տեսնելով ի նմին-  
սիրելազայն են ինձ զրիչ և ծերան և հասորք երկասիրու-  
թեանց, քան զաթուս իշխանութեանց, յորոց երկնչիմ մա-  
նաւանդ, քան թէ ձգուիլ ի նոսան:  
Կարնեցոց ընտրելի ցուցուած են, ո՞չ Խրիմեան և Սըր-  
ուանձաւեանց, այլ նարպէց և Դիմաքսեան, և կարող են ա-  
նոնցնով լինեց պէտքերը լեցնել:  
Դարով ի գանս Մեարովսայ ի Շատղուած, ես կը կարծեմ  
թէ ի զուր է Շատղուածք գնտըռել ի Թորդում. (զու կ'ըսես  
Շաղագոմ, իսկ ես զրած կը զտնեմ Շատղուածք). Շատղուածք  
Քարձը Հայոց գաւառ է, իսկ Շիփէքի և Պարի ջրաբաշխը  
յայսնի կը ցուցնէ թէ Գլզը-բիլիսէի գլուխն է Տայոց աշ-  
խարհին սկիզբը: Թորդում աճբուջը կը լինի Տայք. և Շատ-  
ղուածքն այլուր պէտք է գետեղել. և այն է ստուգի Զէօրմէ-  
լի, Մասաթ և Օվաճըդ ըստած կողմերը, որք Կարմնէ և  
Սպերէ զատ են և տարբեր, և շատ զոներ ունենալու յար-  
ձար, աւելի խոռաւէտ քան Հացաւէտ Հողեր ունենալով:

Ավճը զիւղին ծօտ, ի Զէօրմէլի, Վանք անսւն մեծ աւերակ մը կայ, զայն կը կարծեմ Մաշտոցեան դպրավանք. այլ խոտելի չէ եթէ Զիբօթ կամ Զիպոսն ալ վանատեղի ըստի, զի ուխտատեղի ալ ոնի, լուսաղբիւր ալ, և յարձար է յոյժ այզպիսի մի հաստատութեան:

Աշա ին կարծիք Նաև յէջմիածին մերթ ընդ մերթ քո-  
յին լուրերը առնլոյ ակնկալութեամբ ձնամ

Մ. Եղիկյան

Մ. եղ. ՕՐՄԱՆԵԱՆ  
Ժ. Գ. Հ.

Այս նամակին՝ հետեւեալ պատասխանը զրկեցի էջմիածին։

Արքազան Տէր.

Մի քանի շարաթ առաջայ նամակնիդ կը ճառ-  
ձէի թէ ուր զրկեմ պատասխանն. Բերայ, թէ Վաղարշապատ:  
Սակայն նոյն միջոցին փոխառութիւն ճ'ալ եղաւ, մինչդեռ  
կուրախանայի Վաղարշակայ որսավայրերէն և աճարանոցնե-  
րէն դէպի Վաղարշապատ յարաբերութիւն հաստակեւս,  
յանկած Բաւեն փոխադրեցին զմեր: Տեղաւորուեցանք առ  
Մուրց գետով, Հասանկայի մէջ սիրով: սիրով, զի սա մերձ  
է ճնշավայրին Վաղարշակայ, Վաղարշաւնի:

Հաճակարծիք զանուեցանք ի մասին Շաղագոնաց կած Տայոց, զի նախորդ նամակս Պոլիս Ճանբելէս երկու օր ցեսոյ շրջադաշտմեան եկանք ի նառիման (որ և նամըրգան): Այցե-

լելով Պուղա գալէն, զրիւք և անուածք խիստ յարմար գտայ Տայոց նահանգի թռիխոս գաւառին, ըստ աշխարհագործեան Խորիոյ ծերուեանց, և այն ասեն նիխախն ալ Տայոց տուի, Թորթումն ալ աճբողջ: Կեդրոն վերադարձիս, նոր գիւտս հաղորդեցի Վինետիկ: Խոկ Սրբազնութեանդ ալ նամակն ստանալով՝ աւելի՛ հաստատական զՃիռ ճը տուի: Այդ նամակին ճէջ փակագիծ ճը ունէիք, որով կը յայսնէիք թէ ի գիրս՝ Շատզոմք յիշուած է, և ոչ՝ Շաղագոմ. բայց ես ուկեղարու մատենազրութեանց ճէջ յիշուած կը տեսնեմ Շաղոմք կամ Շաղագոմ. և նկատելի է թէ Քերթողահայրն ճեր Մովսէս՝ իւր Պատմազրութեան ճէջ “Շաղոմք” կը պրէ, իսկ աշխարհազրութեանը ճէջ „Շատզոմք”:

Շաղոմքն արդարեւ Թորթումը չէ՛. այլ պէտք է լինի Կարնոյ կողմերն, ու հաւանականաբար Օվանքը ըսուած գաւառակն և եթ, որ մերձաւորագոյն է Կարնոյ քան զՔօրմէլի. Մասաթ աւելի հեռու կը ճնայ: Բայց ե. այնպէս՝ հաւանական է թէ ԶՔօրմէլի ճորն ալ, Եազիկն ճինչեւ Պարզենիք, ճեր վնտուած Շաղագոմայ ճէկ ճամսն ըլլայ. զի ԶՔօրմէլի ջրոյն ճախ ափն, Ավճը և Մուլք գիւղօրէից ընդ ճէջ, «ի Հովանսուոր տեղին» զանուած (յանուն Ս. Աստուածածնայ) ընդարձակ մենաստանի ճը աւերակն՝ ինձ ևս թուի լինել Մաշտոցիսն դպրավանեն, որպէս զրէք առ իս: Այլ աւելի հաստատութիւն կուտայ տեղացոց այն աւանդութիւնը, թէ «Ժամանակաւ քառասուն վարդապետք ճական կը խաղան եղեր անդ»: վասն զի Մեսրոպաց ժողված «ճանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, փափկաձայնս և երկարովիս» էին թուովք «Քառասուն»:

Այս խնդիրը լուծուած կը համարուի դրեա՛ թէ: Այժմ կը ճնայ՝ Կարայրվարը, զոր Կարնոյ ճէջ պէտք է վնտուել

կարծեմ. ի՞նչ կըսէք:

Խոհարհաբար համբուրելով սուրբ Աջդ, մնան  
ն. ձ.

Վշտակիր Կ. Յ. ՊԱՍՄԱՑԵԱՆ

և Բասեն Այրարատայ, ԺԱ Հոռի ՏՅԱՅԹ.

ԺԴ.

Բաւական ժամանակ անցաւ, ո՛չ Սարգիսեանէն և ոչ Օրմանեանէն պատասխան ստացայ. ուստի հետեւեալ նամակը դրկեցի Օրմանեանին.

Հայր Սրբազն,

Անցեալ օր Բասենոյ Ս. Աստուածածնայ վանքն երթարով տեսայ և ծայրէ ի ծայր կարդացի Արոռ Հայաստանեայ անուն նոր երկասիրութիւնն Զեր: Այդ զըքին բովանդակութիւնն ինձ համար նոր քան ճը չէր սակայն. այլ երկու վեցեակ տարիներ առաջ կարդացած էի դարձեալ Զեկ ճէկ ուրիշ երկասիրութեան ճէջ, — Le Vatican et les Arménies.

Ինչպէս Դուք յիշեալ երկու ընտիր գրուածոցդ ճէջ Դաւանց Թուղթին ստութիւնը կ'ապացուցանէք, այլ և այլ պատմական փաստերով, նոյնպէս և ևս հերքած էի զայն՝ իմ կարձ խելքով՝ անհարազատութեան կնիք դնելով անոր Ճակատը:

Ագաթանգեղոս, ինչպէս և՛ Զենոբ, և՛ Բիւլզանդ, և՛ Խո-  
րենացի, և՛ Յովհանն Կաթողիկոս, և՛ Ասողիկ. և՛ Ան. և՛ Ան-  
կաւանդին Տրդատայ Հռովմ Երթալն, — ոմանք՝ ընդ Լուսա-  
ւորչի, — բայց ո՛չ Սեղբետրոսի հետ կրօնական միութիւն  
կամ դաշինք ճը դնելու, այլ Կոստանդիիանոսի հետ քաղաքա-  
կան սերտ բարեկամութիւն ճը հաստատելու համար. որոյ  
ամփսաւելի ապացոյց են Երեք մեծանուն ու ժամանակա-  
կից պատճառքաց խօսքերն, զրոս մէջ կը բերեմ աստ. Ա.  
Ագաթանգեղոս անկարելի էր որ այդպիսի նշանաւոր խնդրոյ  
ճը առջև կասեցընէր իւր զրիչն, փոխանակ աւելորդաբանու-  
թեամբ պաճուճելու իւր Գիրքն. այլ պարզօրէն զրեց.

(Կոստանդիիանոս) և արքային Տրդատայ իբրև Եղբօր սի-  
րելոյ սէր ցուցեալ ուրախութեամբ մեծաւ . . . դաշինս կը-  
ուէր ընդ նմա . . . զի անշուշտ մինչ ՚ի բուն ՚զհաւատարիմ  
սէրն ՚ի մէջ թագաւորութեանցն պահեսցէն»: (Ագաթ. Պտմ.  
եր. 649:) Բ. Զենոբ Գրակ Լուսաւորչի հետ Կեսարիայէն ՚ի  
Հայաստան եկած էր, և անոր Հրամանաւ իսկ զրեց իւր  
Թուղթն կամ լաւ ևս իւր Պատճութիւնն: Զենոբ՝ որդիական  
ակնածութեամբ իւր տիրոջ (Լուսաւորչի) խօսքը կատարեց  
ամենայն հաւատարմութեամբ. արդ, Լուսաւորչի Հռովմ Եր-  
թալն ՚ի մէջ բերելով Հանդերձ Երբեք չիշատակից յիշեալ  
կրօնական կարծեցեալ միութիւնն, — անշուշտ չգոյութեան  
պատճառաւ, — այլ միայն զրեց. ”՚ի ժամանակոն յայնոսիկ  
լուր Եշաս ՚ի գուռն արքային (Տրդատայ) եթէ Կոստանդիիա-  
նոս կայսրն հաւատաց ՚ի Քրիստոս Աստուած . . . ապա  
խորհուրդ ՚ի մէջ առեալ գնալ ՚ի գուռն կայսեր վասն  
զնելոյ դաշինս խաղաղութեան ՚ի մէջ իւրեանց»: (Զենոբ,  
Պտմ. 40:) Գ. Փաւստոս Բիւլզանդացի յիշելով Հայոց ՚ի

թշնամեաց նեղութիւն կրած ժամանակ Վաղէս կայսրէն  
խնդրած օգնութիւնն, կը զրէ՝ թէ Վաղէս յանձն կառնուր  
յիշելով զուխտն «զլաշանցն կրելոց՝ զերդանցն հաստատու-  
թեան միջնորդութեամբ ՚ի մէջ կայսերն Կոստանդիանոսի եւ ՚ի  
մէջ թագաւորին Տրդատայ»: (Բիւլ. Պտմ. Գ. գլ. իւ. եր. 55)

Դալով Դաշանց Թուղթ ըսուած դրութեան. թերեւ յիշ-  
եալ քաղաքական միութեան համար կնքուած դաշանց թըդ-  
թոյն մէկ մասն ըլլայ, զրեալ յԱգաթանգեղեայ, և ապա ձեռ-  
նամուխ զրիչներէ խարդախեալ. վասն զի Ագաթանգեղոսի  
Պատճութեան և Դաշանց Թղթոյն լեզուներն իրարու այն.  
քան Հակառակ են, որ ուշիմ ընթերցողն կատիպուի անվա-  
ւեր գրուած ճը սեպել զայն: Առաջինն ունի ոսկեղէն դարու  
ընտիր և Հայկաբան ուն, իսկ Երկրորդն՝ պղնձի դարուն  
անկեալ ու աղաւաղ լեզուն. ապացոյց նոյն թղթոյն մէջ գոր-  
ծածուած արաբական, թուրքական, գաղղական, լատինական,  
ևն բառեր, ինչպէս՝ սլեհ (սլյաշ), Ֆրեր, Օֆրանդ, եւ  
ալլովքն Հանդերձ: Ասկից՝ և այլ պատճական վկայութիւն-  
ներէ՝ կը հետեւի թէ ժբ գարու մէջ յօրինուած և կամ ձեռ-  
նամուխ եղած է այլ Թուղթն, ըստ որում հայք այն ատեն  
աւելի՛ յարաբերութիւն ունեցան Լատինացոց հետ, Խաչակրաց  
Կիլիկիա գալով:

Ահա իմ ալ Համոզում:

Համբուրելով Սրբազնութեանդ Աջն, մնած

Խ. 8.

Վշտակիր Կ. 8. ՊԱՍՄԱՃԵԱՆ

Բասեն, 4 Դեկտ. 87.

8. Գ.— Շաղագոնայ Վարայրվարը ճռոցա՞ք. այս ճա-  
մին ալ Զեր կարծիքն յայտնեցէք:

ՆՈՅՆՆ

ՃԵ.

Նկատելով որ Սարգիսեան չի պատասխաներ,  
ստիպուցայ յիշեցնել իրեն՝ թէ անպատասխա-  
նի թողուցած է Նաւասարդին զրած թուղթու։ Եւ  
ուրախութեամբ ստացայ հետեւեալը.

Ազնիւ Պարոն

Եիրաւի ձեր վերջին թղթոյն պատասխանն յամեցի, բայց  
երկու պատճառներ ստիպեցին զիս առ այս. նախ՝ ձեր տէ-  
րութեան այժմեան վարձունքը ընդ հայազգի հպատակաց.  
ուստի ես իսկ կը խղճեմ, զի մի դուցէ այս թղթագրական  
յարաբերութեամբ կերպով մը ձեզի փորձութեան առիթ տը-  
ւած լինիմ. երկրորդ՝ ես կը ցանկացի որ դուք ձեր կողմանէ,  
ինձ թղթակցութեան նիւթ ճատակարարէիք, ոչ եթէ տեսա-  
կան հարցերով և եթ՝ այլ դրականապէս, այսինքն է, կամ  
արձանագրութեամբք հին ճնացուածոց, կամ յիշատակարա-  
նոք ձեռագրաց և կամ ուրիշ ո՞ր և է նշճարով և նշխարով  
հայ արտադրութեանց։ Ես լիայոյս եճ թէ այս կերպով կա-  
րելի է մեր յարաբերութիւններն արդիւնաւորել, և կը ցան-  
կացի որ դուք ես սոյն համոզումն ունենայիք. ճանաւանդ  
թէ զայն իրականացնելու դրվելի ջանքը։ Արդարև, մեր  
քաղցրիկ Հայրենեաց ճռոցուած տեղիքն յիշատակել և նոյց  
լոկ յիշատակօքը մեր տարաբաղդ սրտերն սփոփելն իսկ բը-  
նական բան մի է, սակայն նոյնը կարող ենք ընել, դուք ի

Կ. Պոլիս վերադարձած ճիջոցին և ես յանդորրավայրն Ա. Ղա-  
ղարու, ուր հանգչին արդ նուիրական երկունք երջանկացի-  
շատակ համեստաց մերոց. ուրեմն այդ տեղ պէտք է հաւա-  
քել և աւագ աչօք զննել այն բաները, լրացնելու համար  
Խնձիճեանի, Սարգիսեանի և Ալիշանի հետազոտութիւնները,  
զորս ի բացակայութենէ անկարանածք նկատել Մեծապէս  
կը ցանկացի, եթէ երբէք ձեր այդ գիւղերն և աւանները այց  
ելած ճիջոցին տեսած էք կամ տեսանիցէք ձեռագիրս՝ հա-  
ճէիք գէթ նոցա ցանկը կամ բովանդակութիւնն ինձ յը-  
ղարկել, որպէսզի կարենամ դատել թէ մեր պատճութիւնը  
լուսաւորող մի բան կայ եթէ ոչ։ Առ այս շատ հարկաւոր  
են Ղաղարաց, Բուգանզայ և Զենոբայ հրատարակութեանց  
անթերի նախերգութիւննք կամ յառաջարանքը։ Բ. յունարէն  
տառիւ հնաւանդ արձանագրութիւններ կամ յիշատակարան-  
ներ։ Եօշքայ նախշուն եկեղեցին՝ Բաղարատունեաց ժամա-  
նակամիջոցէն անդին չանցնիր, ուստի իմ կարծիքով կարելի  
չէ Մեսրովեան դպրոց ենթադրել. բաց ի վրացի արձանա-  
գրութեանդ եթէ ուրիշ նորադիւտ արձանագրութիւնք եւս  
դտած էք, խնդրեմ հաղորդել Յունահայաստանի կամ Հայոց  
յունաբաժնի սահմանը՝ իմ կարծիքով՝ գետն Ախուրեան համա-  
րելու է, գէթ ի ժամանակս մեծին Խոսրովու. զի յետ ճահ-  
ուան նորա Օտայ ամրացաւ յամուրն Անի, իբրև ազատ վայր  
յիշխանութենէ Պարսից։ Իսկ յետոյ ի ժամանակս Մեսրովայ  
հաւանօրէն Եփրատ գետն Մովսէս Գ. գլ. Կ. ոչ միայն Սպէր  
այլ և Դերջան և Եկեղեց գաւառներն Յունաց բաժին կը  
համարի և աստի անցանել տայ Մեսրովայ յԱյրարատ գա-  
ւառ ի բաժնին Պարսից։ Ալիշանի կարծեօք այնպէս եղած  
պէտք է լինի ինչպէս է այժմ Տաճկահայոց սահմանը, յետ

վերջին ոռոսական պատերազմին։ Դուք Յունաց բաժնին սահմանը որոշիչ կը հաճարիք Մեսրովեան դալրոցին, բայց ըստ իս քնաւ ածենելին։ վասն զի Կարին ևս յունաց բաժնին էր։ ուստի դարձեալ կ'ըսեմ և հաճողուած եմ թէ պէտք է Թորթում քաղաքի շրջակայ աւերածոց կամ չին մնացուածոց մէջ որոնել, այնպիսի ջրարբի վայր մի որոն կարենաց պատշաճիլ Խորենացւոյ նկարագիրն։

Մաղթելով Ամանորաբեր աւուրց հետ նաև քաջողութիւն պարագայց ամօք ճնամ հետախոյզ Տեառնդ

Հ. Բարսեղ Սարգիսեան  
Կր. Միհթարեան

Վենետիկ, Ս. Ղաղար, 8 Դեկտ. 1887

ԺԶ.

Առ թղթոյն անմիջապէս պատասխանեցի, ըստ այսու։

Վերապատուելի Հայր։

Ձեր Դեկտեմբերի 8ին զրած թուղթն ստանալովս շատ ուրախացաց։ Սակայն Յունահայաստանի սահմանը Մեսրովեան դալրոցին որոշիչ հաճարելու առթիւ Ձեր "բնաւ ածենեին" զիս մտաց մեծ յուղման մէջ ձգեց։ և առիպուեցայ անդամ մ'ես աչքէ անցընել Խորենացին և Փարավեցին։ բայց ուրիշ հաճողում մը չունեցայ մանաւանդ թէ նախկին հաճողմանս վրայ առաւելապէս հաստատուեցայ։ վասն զի, ինչպէս նախորդ թղթովս ալ ապացուցած եմ, Թորթում Շատ գոճքը չէ, և թէ Շատգոճք՝ Յունաց միանգամայն Պարսից

բաժին եղած էր։ (Խոր. Գ. զլ. ՄԴ, Կ, և Փարա. Էջ 443—444։) Ես ընդունելովս թէ Սպեր, Դերջան ու Եկեղեց զաւանելոն ևս Յունաց բաժին էին, հաճողմանէս երբեք ետք չեմ կենար, և աւելի կը հաստատածախմ զի Շաղագոծն կը զետեղեմ ընդ մէջ Սպերու և Թորթումայ, Զէօրմէլիի և Օվաճըքի կորմերն, "որք, —ինչպէս Օրմանեան ալ զրած է ինձ, —Կարինէ, և Սպերէ զատ են և տարբեր։ Այսպէս ընդունելով Շաղագոծն, կը դանեմք Մաշտացեան դպրավանքն ալ, որ ի ձորն Զէօրմէլի, մերձ ի զիւղն որ անուանի Մուլք, ուր կը տեմնուին մնացորդք ընդարձակ մնաստանի մը և որոյ համար աւանդութեամբ կը պատմեն թէ "ժամանակաւ քառասուն վարդսպետք մական կը խաղան եղեր։ Մեսրովեայ աշակերտաց Ճիշտ թուոյն վրայ կուզէի զրել Հ. Զարահաննելեանին, ու տեղեկանալ. վասն զի ինք «վաթսուն» կըսէ Հայ Դպրութեան Պատմութեան մէջ, և ե զարու մատենազիրք մեղ կաւանդեն անուամբ երեսունուհինդ աշակերտք, իսկ հին մեռազրի մը մէջ ալ կը կարգանք։" (Սահմակ և Մեսրովպայ) ինզիր արարին մանկանցն, և ընարեցին աշակերտս Խ. մտաւոր և սրազրուխու։ (\*). զոր եթէ այսպէս ընդունինք՝ յարմար կուզայ նոյն աւանդութեան, և մանաւանդ կմաննք ըսել թէ Մեսրովեայ բազմաթիւ աշակերտաց բառասունը միայն իրենց առաջին ուսումն առած են ի Շաղագոծն Արդ, ինզիր, բարեհաճիք անդամ մ'ես աչքէ անցընել վերջին թուղթս։

Գալով Ձեր փափագանաց, արդէն Հ. Ալիշանին ինձ յուծ աւեղազելի նիւթոց ծրագրին համեմատ կը շարունակեմ հետազոտութիւնքս. սակայն չեմ գտներ այնպիսի մի ածենա-

(\*) Հնոց եւ նորոց, երես 44. (Գ. Ա. Սրուանձտեանց)։

կարևոր հնութիւն Զեզ հաղորդելու, այլ գտածներս են. Ա.  
Զեռազրաց մէջ՝ Աւետարան, Մաշտոց, Յայսմաւուրք, և ասոնց  
նման բաներ, որոց լոկ յիշատակարանները զարափարելով գո-  
հացած են. Բ. Արձանազրութիւններէն,— Հ. Սարգիսեանի  
աշխատասիրութենէն դուրս,— Խախուայ մէջ ճատրան մը  
վրայի խաչքարին կրած կիսաքանդ հայ տառերն. Ոտոք կամ  
էօտիւք ձորին մէջ բերդակի մը վրացի սա կիսամաշ դրերն.  
" + Տէր Աստուած պահպահ(նեա) բերդս (?) . . . ինչպէս  
նաև յայլ և այլ տեղիս պատահած հիմ գերեզմանաց արձա-  
նազրութիւններ, զորս նոյնութեամբ ընդօրինակած ու պահած  
են, Տեղազրութեամբս ի լոյս ընծայելու դիտմամբ. Գ. Հիմ եւ  
պատճական վայրերէն գտած են Թարպեցւոյն յիշատակած  
Պարխար լեռներն և Ծաղիկ ու Որջնիաղ գիւղերն. այս  
վերջոյն մէջ աւանդութեամբ կը ցուցնեն Հմայեկայ ինկած  
տեղն, որոց վրայ ճօտակայ Կարմրիկ գիւղի ազգայիններէն  
մին ճատուռ մը շինել տուած է. ես ևս վափաքեցայ զե-  
րեզմանաքար մը դնել նոյն սուրբ նահատակին գերեզմանին  
վրայ, այս արձանազրութեամբ. «Սատ ընդունի զկատարելու-  
թեանն պսակ և ածիոփին սուրբ նշխարքն երանելոյն  
սեպհոյ Հմայեկի Մածիկոննոյ, եղոր Քաջին Վարդանայ,  
սպարապետին Հայոց». սակայն Մելքիսեդեկեան Գերապայ-  
ծառն արգիլեց, առարկելով ժամանակին փափկութիւնը:

Համբուրելով սուրբ Աջդ, անհամբեր կսպասեմ Վերա-  
պատուութեանդ թղթոյն:

Մնամ

ի. ծ.

Վշտակիր Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

Բասեան, ի գետափն Մուրզ, ԻԶ Քաղոց 882թ.

ԺԵ.

Այս նամակս անպատասխանի մնաց ցարդ: Օր  
մալյանկարծ Օրմանեանէն ստացայ հետազայն:

Թիւ 181.

Ս. Էջմիածին, 9 Յունիս 1888.

Սիրելիդ Կարսպետ.

Դեկտ. 4 թուակիր նամակովդ իմ "Աթոռ" հրատարա-  
կութեան առթիւ կը խօսիս Դաշանց թղթոյն վրայ: Դաշանց  
թղթոյն ստութիւնը այնպիսի ստուգութեամբ մի է այսօր, որ  
բոլոր ներքին և արտաքին փաստեր զայն արևի պէս պայ-  
ծառ կը կացուցանեն:

Խողիրը կը ճնայ Ս. Լուսաւորչի ի Հոռմ երթալուն  
վրայ: Խնձի համար այն ալ սուռ է. Լուսաւորիչ ի Հոռմ չէ  
զնացած, թէպէտ զու Ազաթանգեղոսի, Զենորի և Փաւստոսի  
վկայութիւններով այլուափ ընդունիլ կ'երևիս: Գլխաւոր փաս-  
տը այս է որ ոչ Տրդատայ և Լուսաւորչի բացակայութիւնը  
Հնար է Հայոց պատճութեան մէջ զետեղել, և ոչ Լուսա-  
ւորչի և Տրդատայ ներկայութիւնը Հնար է Հոռմայ  
պատճութեան մէջ զետեղել. երկուքն ալ չեն ընդու-  
նիր: Հոռմայեցւոց պատճիչք կ'ընդունին Հայոց Տրդատ  
մը ի Հոռմ գնացած, այլ ներմնի օրով. սակայն Արտաշէս  
Բ.ին կը համեմատի և ոչ Տրդատին: Անուններու շփոթութիւն  
մը ձագում տուած է այդ պատճութեան շփոթուելուն: Այլ  
թէ Ազաթանգեղոսի մէջ սպազայ ժամանակներ ձեռք ճտած

է, այդ ճատենազրական ստուգոթիւն է. նմանապէս ուրիշ գրոց համար ալ նոյն կասկածները կան, թող որ Խորենացին, Փաւատոս, Ասողիկ ևն, լոկ Տրդատայ երթալը կը յիշեն, եւ ոչ Լուսաւորչի երթալը. Ես նպատակ ունենալով եկեղեցական խմբիր ձը լուծել, և ոչ պատճական. կէտ ձը պարզէլ, խորոյն այդ կողմը զանց ըրի. սակայն իմ համոզումս այն է որ զրեցի. և այլչափն ալ Քեզ յուշ առնել կարեոր զատեցի:

Եաղագոմէ շատ հեռացայ. և առ այժմ զաւանական խմբներով աւելի կղաղիմ, քան թէ աշխարհագրական. ուստի և նոր տեղեկութիւններ տալ չեմ կարող:

Սիրով և ողջունիւս մնամ աղօթարար  
ՄԱՂԻ Եպ. ՕՐՄԻՆԵԱՆ

Այս թղթոյն չկրցի պատասխանել. զի պաշտօնս լրանալով՝ Պոլիս վերադարձայ: Իսկ Հայր Սարգիսեան անպատասխանի թողլով վերջին թուղթս, մեր բանասիրական թղթակցութիւնը զաղբեցաւ:

Մեսրոսպայ առաջին զպրոցի մասին հիմակուան կարծիքս այն է, որ նա կը համապատասխանէ արդի Բաղչա վանքին, որ կը գտնուի Սպեր քաղքին եւ Թօփրաք-քալալի միջեւ. իսկ թօփրաք քաղքին կը կարծեմ ըլլալ մեր փնտուած Վարայր-վար ամրոցը. երկուքն ալ կարնոյ հիւսիսային կողմը, մին ձորոխի եւ միւսը Սէրէէմէ ջուրի աղբերականց մօտերը:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

### ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏԵՂԻ

Այս օրերս ձեռքս հասաւ Գեր. Բարդէն Սրբազնի մէկ նոր աշխատութիւնը՝ Քաջն-Վարդան, զոր մեծ հաճոյքով և հետաքրքրութեամբ կարդացի, հակառակ որ տասն անզամէ աւելի ծայրէ ծայր կարդացած եմ Վարդանանց երկու նշանաւոր պատճիշները.— Ղաղար Փարակեցին ու Եղիշէն:

Քաջն-Վարդան ճիշտ ժամանակին կը հասի, յոյս ներշնչելու համար մեր արդի վիճակէն յուսահատ ազգայիններուն, և լոյս տալու համար մեր անցեալ պատճութենէն օգտուիլ չգիտցող քաղաքական առաջնորդներուն: Երանի՛ թէ շատոնց հրատարակուած ըլլար Քաջն-Վարդան, և իրեւ առաջնորդ արուէր բոլոր Հայերու ձեռք:

Ինչպէս ամէն անզամ Փարակեցին ու Եղիշէն թղթատած ատենս, այս անզամ ալ Բարդէն Սրբազնի Քաջն-Վարդանը կարդալով՝ սա Հարցումն ինձ տուի.— Ո՞ւր էր արդիօք Վարդանանց պատերազմին աեղլ:

Միքայէլ Փորթուգալ Փաշա իր Եղիշէին մէջ, Գալուստ Շիրմազնեանի տեղագրութեան հետեւելով, Ատրպատականի Խոյ քաղաքէն քիչ հեռու և անոր Հիւսիսային կողմը զլունուող Զորսի զաշտն ընդունած է իրեւ Աւարայրի դաշտ, իսկ Զորս գիւղը Քարավիալին աւանէն բաժնող Աքսու գետը կը կարծէ ըլլալ Տղմուտ գետ:

Բաֆֆի և իր ձանապարհորդութիւն Պարսկաստանի աշխատութեան Երդ նամակին մէջ Խոյի շատ մօտիկ՝ բայց Ղօթուր (Կօթուր) գետի աջ կողմերը կը նույնի Վարդանանց պատերազմին տեղը, և նոյն իսկ Ղօթուրը կը նոյնացնէ պատմական Տղմուտին Հետ:

Այս կարծեաց դէմ կելէ, սակայն, Հին Հայաստանի աշխարհագրական բաժանումը:

Յայսնի է, թէ «Աւարայր» կը գտնուէր Հայաստանի տասնըհինգ նահանգներէն Վասպուրականի Արտազ կամ Շաւարշան գաւառին մէջ, մինչդեռ Խոյ, որ Հին Հեր աւանին կը հաճապատասխանէ, կը գտնուի Պարսկահայք նահանգին Հեր գաւառին մէջ:

Ընդունելով ուրեմն թէ Հեր գաւառը Պարսկահայոց Հիւսիսային սահմանը կը կազմէր, Պարսիկները Զարաւանդ եւ Հեր գաւառներէն անցնելով է որ անձիջապէս մտան Վասպուրական. բայց նոյն ուղղութեամբ Արտազ գաւառն երթալու համար՝ ստիպուած էին անցնիլ Վասպուրականի ԿրՃունիք և Թոռնաւան գաւառներէն, ըստ որում Արտազ կը գտնուէր նոյն նահանգին Հիւսիսային ճամբն վրայ; Արդ՝ այս երկրածասը կը հաճապատասխանէ արդի Մակուի խանութեան, մինչդեռ Չորս և Քարազլիալին կը գտնուին արդի Չայփարա և Արաջըք գաւառներուն միջեւ, և կը պատկանին մեր Հին ճամանակին:

Մակուի հարաւային կողմը՝ Զալլըրանի լեռներէն բըդ-խելով դէպի Հիւսիս վազող ջուրը կը կոչուի Աք-չայ, որ Մակուի առջեւ կը միանայ Մակու-չայի Հետ, և միասին կերթայ կը խառնուի Արաքսին; Աք-չայի աղբերականց կողմ Օվաջըք (Փոքրիկ Դաշտ) անունով վայր ճը. կայ, ո-

րուն մօտ է նաեւ Ս. Թաղէոսի վանքը: Ահա այս Օվաջըքի փոքրիկ դաշտն եղած պիտի ըլլայ «Արտազու դաշտ»ն, որ տեղի ունեցած է Վարդանանց նշանաւոր պատերազմը, 451 թուին: «Տղմուտ գետ» յատկապէս այն ջուրն է, որ Մարամդի քավերէն սկիզբ կառնէ, և դէպի Հիւսիս ընթանալով «Աք-չայ» անունը կստանայ: Իսկ Վարդանանց նահատակութիւնը կատարուած է մօտակայ «Աւարայր գեօղ»ին մէջ, որ հաւանականաբար Հիմակուան Քիլիսէքէնդ պարսկական գիւղն ըլլալու է:

Հետազութիւնս փակելէ առաջ՝ ընթերցողներուս ու շալութիւնը կուգեմ Հրաւիրել սա կէտին վրայ, թէ աշխարհացոյց քարտէսներն իրարու համաձայն չեն Աք-չայի մսին: Ոմանք երկու Աք-չայ կընդունին. մին Մակուի առջեւ, իսկ միւսը՝ մեր Հրաւիրել «Աք-սու» կոչածը: Ոմանք ալ Աք-չայ կանուանեն Թոռնարիկ լեռան մօտերէն բղիսելով դէպի Արևելք հսող ջուրը, որ Մակուի առջեւէն անցնելով Արաքս կը նետուի: Ես առաջնորդ բռնած եմ ինձ՝ ուռւս զօրական Խանիքովի պատրաստած Ասրպատականի մեծաղիր քարտէսը:

Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ







ՀՀ Ազգային գրադարան



NL0412145

